


Վահան Զանոյեան



Երկիր	ԱՄՆ / Հայաստան
Ծննդավայր	Լիբանան
Խօսած լեզուներ	Արմ, անգլ, արբ
Ազդեցութեան ոլորտ	Տնտեսութիւն, անվտանգութիւն, գրականութիւն, գինեգիտութիւն, մտաւորական առաջնորդութիւն
Զբաղեցրած պաշտօններ	Նախագահ եւ գործադիր տնօրէն՝ PFC Energy Նախագահ՝ PFC Energy International Գործադիր տնօրէն՝ First Energy Bank

Վահան Զանոյեան յառաջադէմ ամերիկահայ մըն է, որուն բազմակողմանի մասնագիտական գործունէութիւնը կ'ընդգրկէ տնտեսագիտութիւն, ազգային անվտանգութիւն, ուժանիւթի աշխարհաքաղաքականութիւն, գինեգիտութիւն, գրականութիւն, եւ Հայաստանի քաղաքական ու հասարակական խօսույթին մէջ մտաւորական առաջնորդող ներդրում:

Մուսալեռան հպարտ արմատներէն սերող Վահան Զանոյեան ծնած է Լիբանան, մեծցած Այնճարի ու Պէյրութի մէջ: 1975-ին Միացեալ Նահանգներ տեղափոխուելէ ետք, շատ տեղեր իր տունը դարձած են, ներառեալ՝ Ֆիլատելֆիա, Ուաշինկթոն, Լոզան (Ձուիցերիա), Պահրէյն, Նիուփորթ պիչ (Քալիֆորնիա) եւ Հայաստան: Այսօր ան իր ժամանակը կը բաժնէ Նիուփորթ պիչի, Երեւանի եւ Վայոց ձորի միջեւ, ուր իր երազանքի տունը նախագծած եւ կառուցած է:

Զանոյեան իր նախնական կրթութիւնը ստացած է Այնճարի [Հայ անտարանական երկրորդական վարժարան](#)էն, ապա յաճախած է Պէյրութի [Հայ անտարանական քոլեժ](#), ուր իր հայրը՝ դաստիարակ Բաբէն Զանոյեան, չորս տասնամեակ դասաւանդած եւ առաջնորդած է արաբերէնի բաժինն ու լուսանկարչութեան ակումբը: Վահան ստացած է քաղաքական գիտութեան պսակաւոր արուեստից աստիճան 1972-ին եւ տնտեսագիտութեան մագիստրոսական աստիճան 1975-ին՝ [Պէյրութի ամերիկեան համալսարան](#)էն: Յետաւարտական բարձրագոյն ուսումը շարունակած է [Փենսիլուանիոյ համալսարան](#)ին մէջ 1975-1978 թուականներուն:

Մասնագիտութեամբ Զանոյեան խորհրդատուի պաշտօնը վարած է զանազան կառավարութիւններու համար, ներառեալ՝ Միացեալ Նահանգներու, Նորուեկիոյ, Միացեալ Թագաւորութեան, Ֆրանսայի, Ճափոնի, Ղազախստանի եւ Պարսից ծոցի կարգ մը երկիրներու՝ ազգային անվտանգութեան, աշխարհաքաղաքական հարցերու եւ համաշխարհային ուժանիւթի ռազմավարութեան ուղղութիւններով: Ան ծառայած է որպէս

նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրէն «PFC Energy»-ին Ուաշինկթոնի մէջ, «PFC Energy International»-ին Զուիցերիոյ մէջ, եւ «First Energy Bank»-ին Պահրէյնի մէջ:

Իբրեւ գրող, Զանոյեան հրատարակած է երկու հատոր [քանաստեղծական ժողովածոյ](#) հայերէնով՝ «Վերադարձ» (2010) եւ «Եզրէն դուրս» (2011), եւ չորս վէպ անգլերէնով՝ «[A Place Far Away](#) / Հեռուոր տեղ մը» (2013), «[The Doves of Ohanavank](#) / Օհանավանքի աղանիները» (2014), «[The Sacred Sands](#) / Սուրբ աւազները» (2016), «[Waking Noah's Vines](#) / Նոյի որթանունկերու արթնացումը» (2019): Այս վէպերէն երեքը թարգմանուած են հայերէնի:

Իր մասնագիտական եւ գրական ներդրումներէն զատ, Զանոյեան ներգրաւուած է մարդասիրական գործունէութիւններու մէջ, մանաւանդ մարդկային վաճառքի դէմ պայքարին մէջ: Վերջին տարիներուն ան նաեւ աջակցած է Հայաստանի գինիի արդիւնաբերութեան եւ գինեբուծական զբօսաշրջութեան աճին:

Զանոյեանի ամենամեծ արժէքը կը կայանայ իր խորքային, հեռատես տեսլականին ու ռազմավարական մտածելակերպին մէջ՝ հազուագիւտ եւ երթալով աւելի կենսական դարձող յատկութիւն մը հայ իրականութեան մէջ: